

խնդրել՝ փոխուելու, լաւանալու համար, անընկճելի սրտով ու յաջողութեան ուժով օժտուած է եղել:

Ուրեմն, սիրելիս, միայն սիրող չկոտրուի ու չթուլանաս: Ամեն բանն էլ քո կեանքիդ մէջ դեռ կարող է շատ փոխուել. ինչ որ տգեղ էր, աւելի գեղեցկանալ, ինչ որ անազնիւ ու վատ էր, աւելի լաւանալ, ազնուանալ, քան թէ դու քո փոքրագուծիւնովդ ու սակաւահաւատութիւնովդ, գուցէ կասկածում ես, որ կլինի: Բայց ոչ մի բնութեամբ մի կորցնիլ, սկսիլ անելու բանդ. ի՞նչ ես իմանում թէ՛ էլ քանի տարի կեանք է պարգեւած քեզ այս աշխարհումս ապրելու, ու ե՞րբ պիտի ահեղ դատաստանի առաջը դուրս գաս՝ հաշիւ ու համար տալու: Քո բռնած վատ ճանապարհից դուրս գալդ և Աստուծոյ ընդունելի ուղիդ ճանապարհով քնալդ՝ այսօրուանից էգուց մի ձգիր, ոչ էլ աւելի երկար ժամանակի. այլ՝ «այօր, այօր, որ Աստուծոյ յայնը լսում է», յեր սիրբը ի՛ քարացնէք »:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

## ԻՆՉՈՒՄՆ Է ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ:

Երջանկութիւն, երջանկութիւն — որպիսի կախարդական խօսք է: սրբան զանազան մտածմանց, ցանկութեանց, զգացմանց և յոյսերի առարկայ է: Մարդուս ընածին է երջանկութեան ցանկութիւնը: Իւրաքանչիւր մարդ համեմատ իւր զարգացման, հասարակական դրից և հոգեւոր տրամադրութեանց կազմում է իւր համար երջանկութեան գաղափար: Վաճառականը գտնում է իւր երջանկութիւնը 200,000ը վաստակելում, պաշտօնատարը լաւ թոշակի մէջ է տեսնում իւրը, զինուորը շքանշանի և գեներալութեան մէջ որոնում նորան, երիտասարդը գեղեցիկ և հարուստ հարս գտնելումն է տեսնում իւր բազմը, երկրագործը հարուստ հունձ է ցանկանում և արհեստաւորը շատ գործ և ապսպարանք ունենալու է ցանկանում, ի վերջոյ գիտնականն ու սուսումնականն

էլ իւր որևէ երկատիրութեան յաջողութեան կամ արած նոր գիւտի մէջ է գտնոււմ իւր երջանկութիւնը: Նատ անգամ այն որ մէկի համար երջանկութիւն է համարուոււմ, միւսի աչքում գին և նշանակութիւն չունի, և կամ միւսնոյն անձն իւր կեանքի զանազան շրջաններում կաղմոււմ է զանազան գաղափարներ երջանկութեան մասին: Այնքան բողմազան են և փոփոխական մարդոց գաղափարները այդ մասին, որ հաստատապէս կարելի է ասել, որ որոշ և հաստատուն երջանկութիւն աշխարհիս երեսին չկայ, բայց յայտնի բան է այս ամենը հետեանք է սխալ հայեցուածքի նորա վերայ:

Մարդուս երջանկութեան խնդիրը միապէս թէ միշտ նոր և թէ միշտ հին է եղած: Ամենահին ժամանակներումն էլ եղած են իմաստասէրք, որ ձգտած են ուսուցանելու մարդոց այնպէս կենցաղավարելու, որ երջանիկ լինեն. բայց բոլորեցունց փորձերն էլ ի զուր են անցած: Միայն մեր աստուածային Վարդապետ Յիսուս Քրիստոսը ցոյց տուեց մեզ ճշմարիտ ճանապարհն դէպի յուրիտենական երջանկութիւն և միջոցները նրան հասնելու համար:

Ներկայ դարումս շատ կան մարդիկ, որոնք չեն բաւականանում Աւետարանի մատնանիշ եղած երջանկութեամբ և իրանց տկար մարդկային ուժերով աշխատում են գտնել նոր ճանապարհ և միջոց դէպի երկրաւոր երջանկութիւնն: Այսպիսի փորձ փորձեց վերջին ժամանակ և ռուս երեւելի մատենագիր Լ. Ն. Տոլստոյն, որ և մեր մէջ ունեցաւ բաւական հեռավորներ ոչ միայն աշխարհականներից, այլ դժբաղդաբար եւ եկեղեցականներից. որոնք ինչպէս լսում ենք բարոյագիտութեան ուսման մէջ վկայութիւն անգամ բերում են նորա գրուածքներից փոխանակ սուրբ գրքի, ի խայտառակութիւն իրանց հազեոր կոչման և յապացոյց իրանց տգիտութեան սուրբ գրոց մէջ և ի գայթակղութիւն իւրեանց հօտի:

Տոլստոյն ասում է. «Մարդս պէտք է վարել և վայելել իւր կեանքն այնպէս, ինչպէս ասէն կենդանի (անասուն) և երկրաւոր երջանկութիւնը (երեւի երկնաւորը չէ ընդունուում) կախուած է հինգ պայմաններից՝ առաջին պայմանն է — կենցաղավարութիւն գիւ-

զում, բաց երկնքի և արեգական լոյսի ներքոյ, յարաբերութիւն ունենալով հողի, կենդանեաց և բոյսերի հետ, երկրորդ պայմանն է—սիրած և ազատ աշխատանք, վաստակ ֆիզիքական, որ տալիս է ախորժակ և խորին քուն, երրորդն է—ընտանեկան կեանք, չորրորդն ազատ և սիրալիր յարաբերութիւն աշխարհիս բազմազան մարդոց հետ և հինգերորդը—առողջութիւն և անտանջանք մահ: Որքան մարդիկ աւելի ստոր գիրք ունին, այնքան աւելի առողջ են և թեթեւ է նոցա մահն, որքան մարդիկ աւելի բարձր գիրք ունին, այնքան աւելի վատառողջ են: Մարդիկ իրանք են իրանց երջանկութեան պատճառն երկրիս վերայ \*) և չպէտք է յուսան այլ կեանքի որ և է այլ տեղում:

Ահա այս է պ. Տոլստոյի ժամանակակից և նորոշեալ գաղափարն երջանկութեան և մարդկային կեանքի նշանակութեան մասին աշխարհիս վերայ, Այդ հայեցումաճքը կարելի է հիսուեալ խօսքերով ամփոփել. «մարդուս երջանկութիւնն ու արքայութիւնը երկրիս երեսին է և նա ինքն առանց Բարձրագոյն էակի որևէ օգնութեան կարող է նրանց կարգաւորել, աշխատիլ, կերլ, արք, ուրախ եղիլ բարեկամաց հետ և վայելիլ ընտանեկան կեանքը. բայց երբ կըզայ մահը, մեռիլ իբրև անասուն, առանց Աստուած յիշելու, առանց հաւատոյ ապագայ երջանիկ կեանքի, մեռիլ առանց աղօթից ի շրթունս, որովհետև ոչ ոք քեզ օգնութեան հասնել կարող չէ:

Բայց կարող է արդեօք մարդս բաւականանալ միայն երկրաւոր կեանքով, կարող է արդեօք այս կեանքը միայն լինել մեր գոյութեան նպատակն ու գոհացնել ճշմարիտ քրիստոնէին: Եթէ մարդս ապրէր միայն զգոյական կեանքով, լսկ մարմնոյ բնութեան պիտոյքները, կերակուրը, խմելիքն ու մարդկային ցեղը բազմացնելու ձգտումն լցուցանելու համար և չունենար հոգեւոր պիտոյքներ, նա այլ կենդանիներից բնաւ չէր տարբերուիլ, որովհետև նոցա կեանքի նշանակութիւնն ու նպա-

(\*) Այս խօսքերը յիշեցնում են լատինական առածը quisque sui sortis faber est—իւրաքանչիւր դր իւր բաղդի դարբինն (կռոն) է:

տակն էլ նոյնն է: Եթէ այսպէս լինէր, մարդս ընաւ չէր զգալ բարոյական գործունէութեան կարիք և չէր զբաղուիլ ու տանջուիլ ծանր մտաւոր և հոգեւոր խնդիրներով: որոնք նրան ամենամեծ բաւականութիւնն են պատճառում: Սուրբ գրոց վարդապետութեամբ մարդս շատ տարբերուում է այլ կենդանիներից նոյն իսկ իւր ստեղծագործութեամբ, իւր ընութեամբ (հէնց Աստուծոյ փշելից սկիզբն է առած նորա հոգին) և իւր նշանակութեամբ, յաւիտենական երջանկութեան համար, մահից յետ: Ինքն Յիսուս Քրիստոս կամենալով ցոյց տալ հոգւոյ գերազանցութիւնը զգայական մարմնոյ վերայ հարցնում է. «Ձե՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցի. քանզի զի՞նչ տացէ փոխանակ անձին իւրոյ»: (Մարկ. Ը. 36—37): Այս խօսքերով մեր փրկիչը չէ արգելում ձգտիլ երկրաւոր երջանկութեան, չէ արգելում արդար միջոցներով երկրաւոր բարիք ձեռք բերել—այլ խորհուրդ է տալիս երկրաւորին չզոհել երկնաւորը, յաւիտենական երջանկութիւնը չզոհել անցաւորին: Երկրաւոր բարիքը մարդուս հարկաւոր են միայն նորա համար, որ նրանցմով բարեգործութիւններ անելով հարթէ իւր ճանապարհը դէպի յաւիտենական կեանքը: Մինչդեռ Տոլմաթի և նոցա հետեւողների վարդապետութիւնը, որով մարդուս երջանկութիւնը կայանում է միայն զգայական մարմնոյ կարեաց բաւարարութեան մէջ, սնտարակոյս կարող է—մարդկային տկար ընութիւնն դրդել ոչ բարոյական և անարդար միջոցներով ևս այդ երջանկութեան հասնելու, գիշատիչ և յափշտակիչ կենդանեաց օրինակին հետեւելով, որովհետև այդպէս աւելի դիւրին է ամեն մարմնաւոր բարիք ձեռք ձգելն, ինչպէս ցոյց են տալիս ամենօրեայ փորձերն: Բարոյական զգացմունքն ու խիղճը պիտի զսպեն մարդուս, բայց չէ՞ որ դժբա էլ հիմնուած են երկիւղած սիրոյ վերայ դէպի Բարձրագոյն էակն և յաւիտենական կենաց անտարակուսելի յուսոյ վերայ մահից յետ: Սոցա վերանալից կամ ուրացուելից յետ, ինչով պիտի պարարի մարդկային խիղճն ու բարոյականութիւնը: Մարդկութեան ամբողջ պատմութիւնը վկայ է սրան:

Իսառնանք այժմ՝ դէպի Յուստոյի ցոյց տուած պայմաններն և տեսնենք, արդեօք նորա կառաջնորդէն՝ դէպի ճշմարիտ երջանկութիւն:

Բնութեան զննութիւնից աւելի բարձր և ազնիւ բաւակա- նութիւն կայ՝ արդեօք աշխարհումս—բաց օդի մէջ և արեգա- կի լուսոյ սակ անցնող կենցաղավարութիւնից լաւ ի՞նչ կայ: Ո՞ր բաւականութիւնը կարող է համեմատուել երկրիս կենդան- եաց և բոյսերի հետ ունեցած յարաբերութեան հետ: Բայց խնդիրն այն է, որ արդեօք բնութիւնը միայն վայելչութիւնք է մեզ պարգևում:—Մի կողմից լսում ենք լուրեր մրրիկների և փոթորիկների մասին, միւս կողմից հասնում են տեղեկու- թիւնք սարսափելի երկրաշարժի կամ հեղեղների մասին, որոնք հազարաւոր մարդիկ և ամբողջ քաղաքներ ու գաւառներ ոչնչացնում են: Ոչ պակաս նեղութիւնք պատճառում են մարդոց և կենդանիք ու բոյսերն, որոնց պահպանութեան համար նա պէտք է շարունակ պատերազմի բնութեան դէմ: Հերիք է, որ մարդ մտնէ որ և է գիւղ, կենդանեաց ցաւից ու կոտորածից և կամ երաշտութիւնից ու կարկտից յետ, որ տեսնէ թէ որպիսի նեղութիւնք և վիշտ պատճառած են նորա գիւղացոյց, որոց դէմքին և սրտին տիրում են տրտմութիւն և յուսահատութիւն, այստեղ ոչ թէ երջանկութեան նշոյլ չէ երևում, այլ և կեանքը թունաւորած է: Սրանից աւելի տխուր պատկեր անբըակայելի է:

Միթէ ֆիզիքական աշխատանքը կարող է երջանկութեան պայման լինել, քանի որ նա մասն և բաժին հանած է մարդուս Ոստուծմէ իբրև պատիժ մեղաց համար. «քրտամբք երեսոց քոց կերիցես զհաց քո մինչև դարձցիս յիրկիր»: Միթէ կարող է բաւականութիւն պատճառել մարդուս ծանր աշխատանքն, իւր օրական հացը ձեռք բերելու համար, աշխատանքն որ ստիպողական է, կարիքից ու աղքատութիւնից է առաջ եկած. և այսպէս է մարդոցս մեծամասնութեան աշխատանքը: Աւել- յացնենք սորա վերայ և այն որ այդ աշխատանքն անյետաձգե- լի է, որոշեալ ժամանակ նա պէտք է քաշուի, ձմեռը անտա- նելի սառնամանեաց ժամանակ, ամառը անտանելի տապի և

աշխանը անընդհատ անձրևների տակ, խոնաւութեան և հողմերին ենթարկուելով: Իրաւ է ֆիզիքական աշխատանքը տալիս է լաւ ախորժակ և քուն. միայն ամեն մշակ կարճ է արդեօք դրանց վայելիլ, քանի որ մշտական աղքատութիւնը նորան հալածում է, և նրան սկսող ու կաշի է դարձնում: Ճիգիքական աշխատանքը բաւականութիւն կարող է պատճառել միայն այն մարդոց, որոնք նրանով զբաղուում են հանգստանալու համար մտաւոր զբաղմունքից յետ, ոչ թէ օրական ապրուստը հայթայթելու, այլ միայն զւարճութեան ու ախորժակ բանալու և լաւ քնելու համար:

Ընտանեկան կեանքն էլ ոչ միշտ մարդոց բաւականութիւն է պատճառում: Իրաւ է բացառական դէպքերում ընտանեկան կեանքը տալիս է ոմանց խաղաղ և յարմար գոյութիւն. բայց դա ոչ ամենքի համար է: Մարդս համարելով ընտանեկան կեանքը երջանկութիւն, ամուսնանում է—բայց պատահում է հիասթափումն—երջանկութիւնը կորչում է և տեղը բռնում դառն թշուառութիւն: Ամուսնութիւնը միայն զգայական բաւականութեան համար չէ, այլ նորա բարի նպատակն է հոգեւոր կատարելագործումն, ամուսինների բարի ազդեցութեամբ միմեանց վերայ. բայց յաճախ սորա փոխարէն, ամուսինների բնուորութիւնը չեն յարմարուում և սկսուում են անվերջ ցմահ շարունակուող անբաւականութիւնը, կոիւ—մշտական տանջանք: Ապա գալիս են զաւակներն, որոնց ծննդից յետ ծնողք իրանց անձը բոլորովին պիտի ուրանան, նրանց սննեղելու և դաստիարակելու համար, ծնողք չունին ոչ ժամանակ և ոչ իրաւունք իրանց բաւականութեան և երջանկութեան վերայ մտածելու: Նոցա մասն և բաժին է մնում անընդհատ հոգս և աշխատանք իրանց ապագայ սերնդի գոյութիւնն ապահովելու համար: Այս ապահովութիւնն էլ չտի և օտճման չունի: Ընտանեաց և զաւակաց տէրը պէտք է հրաժարուի ամեն անձնատիրական երջանկութիւնից: Աւելացրէք սորա վերայ եւ անյաջող դաստիարակութիւնը, ծնողաց սխալմամբ և կամ արտաքին հանգամանքների ազդեցութիւնից և հասկանալի կըլինի ընտանեկան կեանքի դառնութիւնն էլ, ո՞ր երջանկութիւնը

Թուճաւորելու անկարող է անառակ որդին կամ աղջիկը: Պողոս Առաքեալը ասում է «Որ անկինն է՝ հոգայ զՏեառն թէ որպէս հաճոյ լիցի Տեառն և որ կանամբին է հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում»: (Առ Կորնթ. է. 32—33):

Զորրորդ պայմանն երջանկու թեան — աղաք յարաբերութիւնն է ամէն որեւակ ճարտոց հետ:

Մարդս հասարակական էակ է. նա ապրում է հասարակութեան մէջ և որոնում է ընկերներ իւր համակրութիւնն արտայայտելու. փոխադարձաբար միմեանց կարծիք ու գաղափար հաղորդելու համար: Սովորաբար մարդս որոնում է իրան հաւասար անձանց, որոնք իրանց հասարակական դիրքով և զարգացմամբ կարող լինին նրան ընկերանալ և կամ այնպիսեաց, որոնց հետ նորա շահերը կապուած են: Իրաւ է բարեկամները մեծ զուարճութիւն և բաւականութիւն են պատճառում մարդուս, բայց յաճախ և ամենամեծ դժգոհութեանց էլ առիթ են լինում, յասն զի մի ծանր խօսք և կամ անախորժ վարմունք բարեկամի կողմից աւելի ընդունակ է կսկծեցնելու նորա սիրտը, քան թշնամու կողմից ցոյց տուած վարմունքը կամ ասած զրպարտութիւնը, սորա համար էլ առածն ասում է ամենք բարեկամ են — մինչև սե օրը: Եթէ մենք կարող լինէինք ուրիշների միտքն ու կարծիքը մեր մասին գուշակել, ընդմիջու կհրաժարուէինք ամենալաւ բարեկամներից էլ: Հաստատուն է այն երջանկութիւնն ու անդորրութիւնն, որ կախուած է մեր բարեկամներից, այսօր բարեկամ է և վաղը, երբ շահերը տարբերուում են, կարող է դառնալ թշնամի:

Երջանկութեան վերջին պայմանը — առողջութիւնն — իսպառ անօրոնջանք մահն էն: Որքան ճարտո աղաքայ է և սպորին դերք աննի, ասում է Տոլստոյը, այն ան նորա առողջութիւնն ամուր է և մահը թեթեւ: — Մօտիկ ծանօթութիւնը գիւղական կեանքի հետ և գիտութիւնը հակառակն են վկայում: Որքան մարդիկ աղքատ են և սասոր իրանց դիրքով ու զարգացմամբ, այնքան աւելի տարածուած են նոցա մէջ հիւանդութիւնք և մահ, որովհետև այդպիսիք աւելի զուրկ են կեանքի յարմարութիւններից:

Բաւական է յիշել միայն թէ կարմրուկն ու ծաղիկն որքան զգհեր են տանում գիւղական և աղքատ դասից:

Երջանկուժեան ամեն պայմաններից անհրաժեշտ կարևոր և ամենագերագանցը կարելի է համարել ամեն մարդույ համար առողջութիւնն, որովհետև առողջ աղքատն յիրաւի աւելի երջանիկ է քան հիւանդ հարուստն ու իշխանը. իսկ թեթև, անտանջանք մահը միշտ կախուած չէ աղքատութիւնից կամ հարստութիւնից, այլ կախուած է յաճախ կենցաղավարութեան եղանակից և մարդուս բարոյական վիճակից: Սաղմոսեբուն ասում է, «Մահ մեղաւորի չար է, բայց որ ատեայ զարդարն՝ զյղատցի» (Սաղմ. 19, 22): Բոլոր վերոյիշեալ պայմանները չեն կարող տալ մեզ իսկական երջանկութիւն, որովհետև նորա չունին հաստատ և իմաստուն հիմունք, որոնք ծագելիս լինէին մարդուս բնութիւնից և ձգտումներից: Այն հանգամանքը միայն, որ դժուար է գտնել մի քանի անձինք, որոնք համաձայն լինէին երջանկութեան գաղափարի մասին, իսկ է տալիս, որ աշխարհիս երեսին չկայ իսկական երջանկութիւն: Ի՞նչպէս կարող է հաստատուն լինել այն երջանկութիւնն, որ կախուած է արտաքին հանգամանքներից: Սորա կարող են փոխուել — կանհետանայ և երջանկութիւնն ու մենք կրկին կմտնք դատարկութեամբ սրտի և նոր տենչանօք երջանկութեան: Մեր իաղազուժիւնը մեր մէջն է — մեր ներքին կեանքումն. — առողջ, պարզ և կենդանի միտք, լուսաւորուած քրիստոնէական վարդապետութեամբ, բարեսէր կամք, գոհունակութիւն իւր վիճակով և մանաւանդ մաքուր խիղճ — ահա այն առաւելութիւնք, որոնց չեն կարող փոխանակել ոչ մի գիրք, ոչ մի հարստութիւն աշխարհիս երեսին:

Եայց այս վերջին յատկութիւններն էլ հաստատուն չեն տնում երջանկութիւնը: Մահը ամեն երջանիկների բաղդն էլ խախտում է: Եւ յիրաւի որքան երջանիկ կլինէր աշխարհս եթէ նորա վերայ գոյութիւն չունենար մահը — մեղաց հետեանքը: Ո՛րքան սերտութիւն և բաւականութիւն գտնում ենք բնութեան զինութեան մէջ, ընտանեկան և բարեկամական յարաբերութեանց, ու յաջողութեամբ պսակուած տղուսն

աշխատանքի մէջ: Բայց ամբողջ բնութեան մէջ ամենուրեք թագաւորում է մահը: Մեր այլքի առաջ դարաւոր ծառերը չորանում ընկնում են, գեղեցիկ ծաղիկը թաւամոււմ է խորշակից, ամեն կենդանի, որքան էլ զօրեղ և կատաղի լինի, պէտք է զրկուի կեանքից, ամեն օր տեսնում ենք, ինչպէս արարածոց թագաւորը — մարգը մեռնում է: Որքան էլ գիտնականք աշխատեն համոզել մեզ, օրինակներ բերելով թէ մահը կեանքի բնական պայման ճանաչելու է, — մարդկային հոգին միշտ բողբոջում է գորա դէմ: Մեր հոգւոյ ցանկութիւնը չէ կայանում այս կեանքն, ինչպէս որ կայ, երկարացնելում կամ մի սերունդը միւսին յանձնելում, ոչ: Մենք այլ կեանք ենք ցանկանում և ոչ այս երկրաւորը, մենք ձգտում ենք բարւոյ թագաւորութեան, որոյ լոյսը տեսնում ենք մեր խաւարի խորքից էլ: Եթէ այս անմահութեան և ապագայ կեանքի հաւատը ծածկէին մեզից, այս կեանքը, թէև հարիւր տարի տւէր նա, թէև նորա բոլոր պայմանները գեղեցիկ և յաջող լինէին, ոչ միայն ծանր կ'լինէր մեզ համար և տաղտակալի — միշտ մահը այլքի առաջ ունենալով և նրան սպասելով, այլ և ոչ միտք և նշանակութիւն կունենար նա ինքն ըստ ինքեան:

Բայց մարդոց մեծամասնութեան համար երկրաւոր կեանքը չունի այն գեղեցիկ պայմաններն, որոնցմով երջանկութիւնը ծիծաղելիս լինէր մեր երեսին. մեր սուղութեան օրերը կարճ են և տխուր: Բոլոր մարգիկ ճանապարհորդներ են երկրիս վերայ և սորա ժամանակաւոր բնակիչները, ուստի և կեանքի բոլոր ժամանակ պէտք է պատրաստուեն նոքա այն կեանքի համար, ուր «Արքարտ ծագելոյն իբրև զարեգոյն յարայտութեան երկնից» (Մատթ. 43):

Մեր երջանկութիւնը չէ երկրաւոր երջանկութիւն, այլ մահից յետ երջանկութիւն և յաւիտենական կեանք որն «այժմ պեսակեմք իբրև ընդ հայելի օրինակաւ»: այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ ինչամտաւ եմ ժպտի շատի և կեանքի բոլոր ժամանակ պէտք է պատրաստուեն նոքա այն կեանքի համար, ուր «Արքարտ ծագելոյն իբրև զարեգոյն յարայտութեան երկնից» (Մատթ. 43):

Մեր երջանկութիւնը չէ երկրաւոր երջանկութիւն, այլ մահից յետ երջանկութիւն և յաւիտենական կեանք որն «այժմ պեսակեմք իբրև ընդ հայելի օրինակաւ»: այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ ինչամտաւ եմ ժպտի շատի և կեանքի բոլոր ժամանակ պէտք է պատրաստուեն նոքա այն կեանքի համար, ուր «Արքարտ ծագելոյն իբրև զարեգոյն յարայտութեան երկնից» (Մատթ. 43):

աղքատի, ոչ գիտնականի ու ագէտի և ոչ էլ իշխանի ու սարկի մէջ:

Цер. Вѣст.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՅՆԵՆ ԼԵՋՈՒԻ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԾԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ.

(Շարունակութիւն):

Առաջին տարուայ լեզուի ուսուցման նկարագրութիւնը վերջացուցինք:

Երկրորդ և երրորդ աստիճանայ ընթացքի ժամանակ լեզուի ուսուցումը հարկաւ պէտք է բոլոր խնամով շարունակէ և ընդարձակէ այն ամենայն, ինչ որ աստիճանայ ընթացքում արդէն իբրև հիմք դրուել է: Այսուհետև ևս աշակերտը նախ և առաջ իմաստներ և գաղափարներ պէտք է ստանայ ուսուցչից: Նոյնը պէտք է կարողանայ կանոնաւոր և գեղեցիկ լեզուով արտայայտել բանաւոր, իսկ մասամբ ևս գրաւոր: Ինչ որ վերաբերում է ընթերցանութեան, նորա վարժութիւնը ոչ միայն այն չափով առաջ պէտք է գնայ, որ չափով որ գրաւոր վարժութիւնները հաստատուում են, այլ այսուհետև տպագրած գիրքը պէտք է գործածուի իբրև նոր աղբիւր, որ տեղից որ նոյնպէս կարելի լինի քաղել իմաստներ և գաղափարներ, բայց ի հարկէ իրիստ չափաւոր կիրպով:

Այսուհետև ինչ որ աշակերտը պէտք է հասկանայ և ըմբռնէ՝ լեզուի վարժութիւնը շարունակելու համար, այն չը պէտք է լինին հատ հատ նախադասութիւններ, հատ հատ խօսքեր, այլ ամբողջացած ընտիր հատուածներ, իմաստալից և խոր-